ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆԻՆ

ՉԱՓԱԾՈ ՆԱՄԱԿ

Խաչեղբայրին իմ –
Գևորգ Էմինին

I.

Ես ծխում եմ լո՜ւռ, ագահորեն,
և կարդում եմ լուռ քո նամակը.
Շնչում եմ նրա շունչը նորեն,
որ կարծես ողբ է ու հանաք է...

Չգիտեմ, ինչպե՞ս պատասխանեմ
և մխիթարեմ ինչպե՞ս ես քեզ,
երբ որ խոհերը նույն՝ իշխան են
դարձել իմ գլխին, որ ինձ հսկեն:

Երբ նույն քեզ տանջող ժամանակը
հեգնում է և ինձ ու քրքջում
և իմ պատասխան այս նամակը
նույն աներևույթն է անրջում:

Եվ երբ անզոր եմ փոխելու այն,
ինչ որ կա, ինչ վաղն է լինելու,
երբ սերմն անհույս է, արգանդն՝ ունայն
և վաղը խեղ կյանք է ծնելու:

Եթե չեմ կարող մահին սաստել
«ինչո՞ւ զարդարել ծաղկով մեռելը»:

Լավ է՝ նամակի ընդհատումն այստեղ
սիգարն էլի վառելը...

24/VIII-43, Չանախչի

II.

Բայց սիրում եմ քեզ, իմ որբ ընկեր,
և՝ ուղիդ, գուցե որպես ասուպ
և՝ քո երգերի բույրը խնկե
և՝ նույնիսկ, նույնիսկ խոսքերդ սուտ:

Հարազատ ես դու մռայլ հոգուս,
Մթին բիբերիս տեսիլներին
և՝ կյանքով քո թանկ ու անօգուտ
և՝ տխուր մահով քո... ինձ ների՛ր...

Ես ատել եմ միշտ կյանքում սուտը,
Այն, ինչ թվում է, երևում է
Բայց քո թվում, երևումը
Ինձ համար,– ինչո՞ւ – նույնքան սուրբ է:

Ե՛վ հավատում եմ ես քո խոսքին
և՝ քո համբույրին, և՝ սիրուն քո.
Եվ կեղծ է թվում խոսքիդ ոսկին
և քո համբույրը՝ սուտ բռնկվող:

Բայց քանզի կյանքում ես ատում եմ,
Ա՛յն, ինչ թվում է, երևում է
Ուստի ցնդում է երկմտանքն իմ
և ես կրկին քեզ հավատում եմ...

Եվ ես կրկին քեզ հավատում եմ
և սիրում եմ քեզ... Սիրո՞ւմ... Քիչ է...
Ու քո կենդանի մահացումը
կամ կիսակենդան քո վերջին ճիչը

Պիտի դառնա ի՛նձ համար թառյան
ողբի ու կանչի երգ-սգերգոց,
Անկսկիծ մրմուռ կորցրած արյան...

Եվ շիրմագիրդ ճակատիս ներքո
պիտի դրոշմվի իմ իսկ արյամբ.
– Մեռավ իր երգով, երգով իր հարյավ...

24/VIII-43

III.

Սակայն սիրելիս, սպասի՛ր, լսի՛ր
Դու կամենում ես, թե ի՞նչ եմ գրում..
Մի՞թե կարող է գրել մի սիրտ,
Որը իրեն է միայն քրքրում:

Նա մոլորվել է իրերի բանտում
Ու շղթայվել է ձեռք ու ոտքով
և՝ մաքառում է զօր-գիշեր անդուլ
և՝ մաքառելով կապվում կապանքով...

Նա մրմունջներն է լսում այն մոր,
որ կորցրել է միակ որդուն,
և նրա հառաչը ահավոր,
որ ըսպասվում էր, բայց չեկավ տուն.-

Եվ ձայնն իր կորա՞ծ, կորա՞ծ սիրո
Ու աղաչանքը մեռնող հույսի...
Լսել բոլորին նույնքան սիրով
Մի՞թե կարող է մի մսե սիրտ...

Թեպետ երգում եմ և՛ սեր, և՛ խոհ
Երգում եմ նրանց ձայնով հազար,
Բայց նրանք որքան ինձ հարազատ,
Նույնքան օտար են ու նույնքան խորթ...

Եվ ո՞րն է ճիշտը այս աշխարհում,
Եվ ո՞րն է սուտը,- ես չգիտեմ...
Ո՛չ նոր շավիղն եմ ես նշմարում,
Ո՛չ էլ հին ճամփան ինձ կդյութի...

Օ՜, մեռնե՛լ, մեռնե՛լ դեռ չիմացած
Ո՞ւր է ըստույգը և սուտն ո՞ւր է...
Անգիտակ մահն է մեղմ ու անցավ.
Չէ՞ որ նա էլ մեզ նման կույր է...

24/VIII-43

IV.

Սակայն դու լսիր ինձ վերջին անգամ,
Լսի՛ր գաղտնիքն իմ առանց երդումի.
Չէ՞ որ իմ հոգու Արարիչն անգամ
Այն առանց երդում թողեց սրտում իմ:

Դեռ վաղուց էր այդ, երբ երազուն
Մի մանուկ էի ես թույլ ու անկամ
և թե՛ արթմնի, թե՛ երազում
Երազում էի լինել... խելագար:

Տարիներն անցան՝ ջարդելով իրար,
Թողնելով իրենց ծանրությունն ուսիս...
Մեր տան գերանը ցեցերը կերան,
Մեր աքաղաղը չերգեց մութլուսին:

Մեր բարդիների անտառն, ուրիշի
Կացինից քշված կախվեց քարափից.
Ծեր՝ մայրս մնաց առանց ամուսին,
Ո՛չ այրի սակայն, այլ դեռ արամբի...

Ի՛նչ, որ երազ էր նրանց համար
Այն ցնդեց, ինչպես երազն է ցնդում

Բայց իմ երազը պինդ ու համառ,
Շապիկը պատռեց ու ելավ դուրս...

Գուցե չպատռեր նա իր շապիկը,
Եթե մեր թուխսը իր կտուցով
Պատռեր ձվերի շապիկը ինքը
Ու ձագեր հաներ՝ լի քթոցով...

...Սակայն երևաց՝ լոկ նա է սիրում
Իր որդիներին, աշխարհի վրա...
Որ է՛լ չստիպեն նրանց մի օրում
Երեք ձու ածել՝ ըսպանեց նրանց...

Ես վստահում եմ քեզ իմ գաղտնիքը...
– Ես արդեն գիտեմ՝ խենթ եմ, խելագար,
Թե խելագար չէ ժամանակն ինքը,
Որ չի տեսնում այն, ինչ տեսնո՛ւմ եմ, կա՛...

25/VIII-43

V.

Դու մի՛ տրտմիր իմ մռայլ հայացքից
և իմ խոսքերին դու մի՛ հավատա,
Եթե նրանք քեզ բերում են կսկիծ,
Եթե նրանք քեզ անդուր են ու դառն...

Ես կարող եմ և քեզ մխիթարել
Միմիայն ժպտալ, խնդալ միմիայն,
և վառ գալիքի հույսերը վառել
ինչպես Նեղոսի այն հին մումիան:

Չէ՞ որ ես այնքան ջահել եմ դեռ
և չեմ դադարել դեռ հուսալուց...
Կուզես՝ կհագնեմ բոսոր հանդերձ
Կգնանք մթնում Լույս որսալու...

...Ես ի՞նչ մեղք ունեմ, ժպտով հանդերձ
Մթին գիշերը երբ չի լուսանում,
Որ ես էլ հագնեմ ծիրանի հանդերձ,
Գնանք երկնքից արև որսալու...

Ո՛չ պալատներն եմ այս կառուցել,
Ո՛չ այս հյուղերը շինել ձեռքով...
Իրենք շրջվել են, որպես կառուսել
և մեզ բաշխվելով՝ թողել դժգոհ...

Ես մեղք չունեմ, որ չի լուսանում
Այս գիշերը մութ, մռայլատես
և իմ աչքերը - զույգ լուսամուտ
Դրսից մռայլ են դեռ բերում ներս...

25/VIII-43

VI.

Ես կամենում եմ այսքանով միայն
Պատասխան տալ քո փոքրիկ նամակին,
Սակայն չգիտեմ՝ ինքդ մեն-միայն
Թե՞ այլոց հետ ինձ կտաս կատակի...

Ասենք ինձ համար մեկ է արդեն
թե՝ ինձ ծաղրում են կամ մեծարում...
Ո՛չ կամենում եմ փնջած վարդեր
Ո՛չ մնայուն սեր և ո՛չ՝ անուն:

Գուցե ցանկանամ՝ լինեն վարդեր
Մեր վես լեռների ձյուների տակ,
Իսկ անո՛ւն, անուն ունեմ արդեն
Բայց այդ թվում է ինձ լոկ կատակ:–

Ինչո՞ւ են ինձ հենց այսպես կոչում
Եվ ոչ թե ուրիշ, մի ուրիշ կերպ.

Ինչո՞ւ են, ասենք, ջրին ասում «ջուր»,
Իսկ երբ սոված ես՝ ասում են «կեր»...

Ճիշտ այդպես էլ ես չգիտեմ ինչո՞ւ
Պիտի պատասխան տալ միշտ նամակին,
Այդ հարցերը ինձ օր-գիշեր տանջում
Իսկ վաղը, գուցե, քեզ տան կատակի...

Պարույր Սևակ
25/VIII-43
Չանախչի

VII.

Հ.Գ.

Ողջույնս մեռած բանաստեղծի
Գուցե և վաղը երկնող դստեր,
և վաղը մեռնող բանաստեղծի
Քրոջը, որ վաղ երկնել է դուստր.
Խաչեղբայրներին իմ գրչակից,
Ապա իմ ողջույնն ու սերը իմ,
և՛ հարգանքներս խոր ու խստիվ
և՛ երախտապարտ հույսերը իմ,–
Երգի քննության դեկաբրիստին
և կողակցին նրա երկնած...

Նույնը՝ Ձեր Պարույր,–
Պոետ, դեռ չերգած...

25/VIII-43
Չանախչի

* * *

Գևորգ, սիրելիս

Ստացա նամակդ, որին վաղուց էր, ինչ սպասում էի և որը բավականին ուշացավ:

Ես չէի գրում քեզ, որովհետև քո տան հասցեն չգիտեի, իսկ Գրողների տան հասցեով՝ չէի կամենում: Վերջապես ստացա այն և ոչ միայն ուրախացա, այլև ներշնչվեցի...

Այո՛, այնքան անակնկալ մեկնեցի, որ քեզ էլ չկարողացա տեսնել: Հասա բարեհաջող, բայց հիվանդացա մի շաբաթ: Հետո լավացա, բայց կրկին անկողին ընկա մի շատ լիրիկական պատճառով:— Մեր, այս տարի բոլորովին անպտուղ, մեղուներին մի վայրից մյուսը տեղափոխելիս, լուսաբացին մոտ, լավ չամրացված մի մեղվարկղ բացվեց և մեղուները սկսեցին խայթել խեղճ ավանակին:

Սպառնալի էր և՛ ավանակի վիճակը, որին խայթում էին, և՛ մեղուների վիճակը, որոնց, արդեն համբերությունից դուրս եկած ավանակը պիտի գետին շպրտեր:

Ես ստիպված էի սպառնալի վիճակի մեջ ընկնել, որպեսզի նրանց սպառնալի վիճակից ազատեի: Պետք էր մի հասարակ բան. պարանը դանակով կտրել:

Բայց երբ ուզեցի այդ հասարակ ծառայությունը մատուցել և՛ ավանակին, և՛ մեղուներին, որոնց կարելի էր չխղճալ, զի մեզ մեղրից զրկեցին, նրանք ինձ լուրջ վիճակի մեջ դրեցին:

Բացված արկղի մեղուները 100-ներով, եթե չասեմ 1000-ներով, պատեցին իմ դեմքը, այնքան, որ աչքերս այլևս պարանը չէին տեսնում, լցվեցին իմ բաց օձիքից ներս, շալվարովս դեպի վեր: (Ինչպիսի՛ հանդգնություն)...

Ես կարծում էի, որ խիստ լուրջ վիճակի մեջ դրած պիտի լինեին ինձ, զի գիտեի, որ 40-50 խայթոցը վտանգավոր է դառնում, էլ ո՞ւր մնաց ո՞վ գիտի քանի՛ հարյուրը, սակայն իմ կիսալուրջ վիճակը միայն մի շաբաթ տևեց, իսկ հետո բոլորովին լրջությունը կորցրեց նման այն կանանց, որոնք մինչև ամուսնանալը միայն թվում են, իսկ հետո՝ իրենց անլրջությունը մերկացնում են լրջորեն:

Միշտ պատրաստվում եմ աշխատելու, սակայն մինչև հիմա դեռ պատրաստվում եմ, զի հարմար աշխատանք չկա:

Գրե՞լ... ինչո՞ւ չէ, գրել եմ:

Եթե մնայի մորս մոտ ամառանոցում, ով գիտի ինչքան կգրեի, որով կարելի լիներ ձեր բոլոր բաց ամանների երեսը ծածկել (չէ՞ որ դուք նոր եք հաստատվել) և դրանով, բանաստեղծաբար ոչ բանաստեղծական ծառայություն մատուցանել բանաստեղծի դստեր, սակայն հենց աշխատելու պատրաստվելու համար ինձ ստիպեցի դյուղ մնալ:

Այնուամենայնիվ գրեցի: Կախարդական շրջանը կոխկրտված է... Փառք Արամազդին...

Գրել եմ 3-4 չափածո նովելներ, նման «Դեպի լեռն Մասիս» կամ «Վարդան զորավար»-ին, իհարկե նրանց հետ ո՛չ համեմատելի և ո՛չ էլ լիարժեք, որոնք եթե հարմար համարենք մենք և ընդունելի՝ նրանք, կարելի է տպագրել:

Պատերազմական թեմայով: Զսարսափես, ոչ vulgar իմաստով:

Այնուհետև: Զի իմ չգրելու ողջ ընթացքում խորհում էի և ինձ ամենից շատ խորհել էր տալիս այն բանը, որ ես պետք է կարողանամ սեղմ (ասել է թե կոպիտ կերպով՝ կարճ) գրել:

Ապա ես եկա այն համոզման (աստված ազատի մեզ այդ համոզումներից, որոնք պոռնիկ են և պոռնկացրել են մեզ:— Փառք Հիմենին), որ եթե, Նապոլեոնի խոսքերը կրկնելով, լավագույն (իսկական) զորավարը մի քառակուսի է, որի հիմքը և բարձրությունը հավասար են, ընդ որում հիմքը նրա բնավորությունն է, խառնվածքը, խիզախությունը, վճռականությունը և բարձրությունը՝ նրա խելքը, ինտելեկտուալ հատկությունները, ապա (համարձակվում եմ, ինչո՞ւ) չասել, որ լավագույն (իսկակա՞ն, մի՞թե որոշ է այդ) բանաստեղծն էլ նման պիտի լինի այդ քառակուսուն, եթե նրա հիմքում ընդունենք զգացմունքային և բարձրության տեղ՝ ինտելեկտուալ կողմը:

Ինչպես տեսնում ես այդ մի բռնի ջանք է հին հռոմեացիների ասացվածքի դեմ — «Բանաստեղծ ծնվում են, իսկ հռետոր՝ դառնում»,— մի ջանք, որը գործադրել եմ ցանկացել այդ քառակուսու անհավասար բարձրությունը կրճատելու հօգուտ հիմքի:

Դրա արդյունքն են (նովելները բացառյալ) երկու տասնյակի հասնող ոտանավորները, իսկ այդ ոտանավորների արդյունքը՝ աստված գիտե:

Զէ որ մեծից մինչև ծիծաղելին մի քայլ է, իսկ նրանց մեծության

կամ ծիծաղելիության աստիճանի մասին դու գաղափար կարող ես կազմել քեզ հղված «Զափածո նամակ»-ից: Արդյոք չի ստացվել այն, որ ես ստիպված լինեմ բացականչել.

«Լինել Բոնապարտ և դրանից հետո
Կա՞յսր դառնալ... ինչպիսի՜ ստորացում...»

Ահա իմ բանաստեղծական տրամադրության մոտավոր պատկերը:

Մի բան ինձ համար ուրախալի է. պահեստում ունենալով իմ խառնվածքի (կամ այն, ինչ իմ խառնվածքն են համարում ցածր) ողջ կարողությունն ու թուլությունը, ես արդեն կարող եմ և սեղմ գրել (և կարծես թե փոքր-ինչ պարզ) և ոտանավոր դարձնել իմ այն բոլոր զգացումները, որոնք մինչև հիմա կորչում էին զուր և որոնց կորուստը արգելելու (կամ օգտագործելու) համար ես ստիպված էի անժամանակ ձեռք զարկել արձակի կամ դրամայի:

Էմին սիրելի, կարծում եմ դու այդ մասին քո տպավորությունները մերկությամբ և արագությամբ կհաղորդես ինձ:

Ինչ վերաբերում է իմ ընդհանուր տրամադրության, ապա այն եթե չզգացվի «Նամակ»-ից, ստիպված եմ ավելացնել պոետի խոսքերը.

.....

կամ...

.....

Ավելին ասել եթե ոչ ավելորդ, գոնե անհնարին է և վնասակար:

Ուղարկիր ինձ գրածներդ: Ես, կարծում եմ, բավականաչափ ուղարկեցի, իսկ մնացածները... Չէ՞ որ մեր հանդիպումը այնքան տխուր չպիտի լինի. մենք մնացածներով կփարատենք մեր ձանձրույթը այն ժամանակ:

Մտածիր, որ քո տողերը, թեկուզ ֆրագմենտային ինձ համար ոչ թե հենց այնպես, հետաքրքիր են, այլև ինքդ գիտես, որ ես ներշնչվում եմ միայն (մեծ մասամբ) գրքից, տողից, նույնիսկ բառից և քո ոտանավորը, ֆրագմենտը, տողը, բառը, իմ բացարձակ գրքային սովի պայմաններում ներշնչման աղբյուր կծառայեն և ես ավելի երկար կփարատեմ մեր առօրյական ճղճիմը, երբ գամ:

Քո երկու ֆրագմենտը հիանալի են, բառի ոչ ծամծմված իմաստով, այնքան, որ մի գեղջուկ, բայց խելացի և հուսատու երկրորդ, որը նամակդ կարդալու պահին ինձ մոտ էր, որին և մասնակից

դարձրեցի իմ ուրախությանը,- անգիր սովորեց: Եվ առհասարակ շնորհիվ նրա ավելացավ քո մի նոր լավ ընթերցողը, հասկացողը և սիրողը: Նրանց (ֆրագմենտների) մասին կարող եմ ասել.

.....

Այսօր հոգնած եմ... Այսօր գրել եմ «Նամակ»-ի 3 ոտանավորները և արտագրել ամբողջը, ինչպես և նրա այս պիտակը, այնպես, որ այլևս լավն ու վատը չեմ ջոկում: Գրելու ինքա՜ն ասես նյութ... Միայն թե հաջորդ նամակով առիթ տուր, որքան հնարավոր է շուտ, ինչպես և տեղեկություններ և՛ ձեր, և՛ տղաների, և՛ քաղաքի, և՛ նորությունների մասին: Էմին ջան, իմացիր մեր դասերը ե՞րբ են սկսվում և շտապ հայտնիր, ինչպես և անցիր կոմիսարիատ և ումից որ պետք է (դու գիտես) իմացիր, եթե նրանց թույլ տված ժամանակից ուշանամ (այդ ժամանակը արդեն լրացել է) հո ծայրահեղություններ չեն պատահի:

Ողջույններս Նվարդին սիրելի: Տե՛ս եթե հայերեն լավ իմանար ինձ նամակ կգրեր:

Ե՞րբ է լույս աշխարհ գալու Վահանը: Շտապենք ..... Նվարդի ցավերը և ողջունելու նորեկ պոետին...

Կարոտագին ողջույններս Հեղուշին, Հայկին: Համբուրիր բալիկին ..... փոխարեն (չոր համբույրով): Ողջույններ Վահագնին (ստիպիր մինչև իմ գալը համալսարան ընդունվի մեր աչքի տակ պահելու համար: Անպատճա՛ռ), Ռաֆիկներին, Լևոնին (ոչ նկարիչին) և հեռավոր Վիդոկին: Հարգանքներս, սերս և երախտագիտությունս Ռուբենին, սիրելի Նելլին, մայրիկին և բարի մաղթանքներս փոքրիկ Տաթևիկին (չէ՞)... Այսինքն բոլորին, ում այս պահին մոռացել եմ և ում որ անհրաժեշտ է: ..... մեկիկ-մեկիկ...

Ավազա՛կ. սպասում եմ նամակիդ ավազակային անհամբերությամբ և սպառնալիքով

Քո Պարույր
25/VIII-43 թ.

Հ.Գ. Հայտնիր Նվարդին, որ մթերքներ գնելու նրա իղձը, ստիպված եմ, ի ցավ յուր և ի տրտմություն իմ, անկատար թողնելու, զի ոչինչ չկա: Հասկանում եմ: Ոչինչ չկա...

Նույնը

Հ.Հ.Գ. Ինչ-որ ավտոյի մասին ես ակնարկել: Եթե մի այդպիսի բան լինի ես ձեռքով ու ոտքով (ոչ, միայն ոտքով) երջանիկ կլինեմ, իսկ եթե ինքդ դաս՝ նաև գլխով (մտքով):

Հ.Հ.Հ.Գ. Աշխատիր Երևանը չթողնել: Այդ մասին եթե հնարավոր է, գրիր փոքր-ինչ մանրամասնաբար:

Ապա –

Գրի՛ր...

գրի՛ր...

Քո Պարույր

25/VIII-43 թ.

Հ.Գ. Եթե դասերը սեպտեմբերին սկսվեն և ես քո նամակով այդ մասին ուշ իմանամ, խնդրիր Հրաչին, որ ինձ ու իր համար մի առանձին սենյակ վերցնի, մինչև իմ գալը:

– Սուսաննան վերադարձե՞լ է...

Նույնը

Հրապարակումը պատրաստեց
ԱՐՏԱՇԵՍ ԷՄԻՆԸ